ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«20» փետրվարի 2017 թվականի № 20-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2016 թվականի նոյեմբերի 2-ի թիվ Ֆ-319/16 գրությունը և <Երևանշին> ՍՊ ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՊՎ-66 դիմումը՝

Հրամայում եմ

1. <Երևանշին> ՍՊ ընկերությանը տրամադրել հանքային իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:
2. Ուժը կորցրած ճանաչել՝ <Երևանշին> ՍՊ ընկերության ՀՀ Արարատի մարզի Սևջրի հանքավայրի առաջին տեղամասում շահագործման համար, 2014 թվականի փետրվարի 25-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/484 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ Լ-484 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման Պ-484 պայմանագիրը:
3. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝
- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ